



44. ՇԻՐԻՆ ՇԱԽ, ՊՆՐԱԿ ՇԱԽ, ՏԵՂԻՆ ՇԱԽ

Ժամանակով թագավորը կելնի, ուր մեկ լաճ, տորսեն աս լաճ կերթա նեճիր, նեճիրից ինչ էվարին կը գա հերի՛մ տոռ վե կընցընը, աս հերից ձենըմ կիլնը:

Կըսը. «Քի ուրկո՞ւք, թե՞ պուրպուք»:

Շատ երկու-իրեք տիր աս լաճ կերթա նեճիր, քանը տիրըմ ինչ նեճիրից ինչ կը գա, աս տոռ վե ինչ կը ընցընը, հերից էլ՛մ ձեն կիլնը, կըսը. «Յե՛, թագավորը լաճ, քիկ ուրկո՞ւք, թե՞ պուրպուք»:

Տորսեն աս թագավորը լաճ կերթա տուն, ջոջ մարտիրուն կը պատմը:

Հատե ջոջ մարտըմ կիլնը, կը խասկընա, կըսը. - Թագավորը լաճ, իս գինամ՝ ան ինչ կը, ան քի ժանտըր տարքըմ կա, ան կը կանչը, կըսը քի՛ ուրկո՞ւք կուզես, թե՞ պուրպուք, ան քի տարքըմ տը կա քիկ, ան քի կըսը՝ քի կըպը աս տարք մըկա՞ գա վար քիկ, թի՞ ջոջանաս:

Լաճն էլ էսաց. - Մըկա իս ջըհել եմ, պալքըմ կանամ հաղթեմ, ըզձի անգատեմ, ջոջանամ՝ ալ չըմ կանա, ախըր հաքի տը գա, թըղ մըկա կա, քանց զըմեն աղեկ:

Էտա մարտըն էլ կըսը. - Օր անցկուն ը, ինչ տիր մ՛ էլ կերթաս, կը կանչը, կըսը՝ քի ուրկո՞ւք կըպը, թե՞ պուրպուք, տու էլ սա՞ օր հաքի տիլնը, ձի ուրկուք, տորսեն քի տըսը՝ էն տարքից ինչ տու պըրճնիս, երկըթե անոռ նըստիս, մըսե սեղըն վերա խաց ուտես, օր անգատես:

Տորիս ետ թագաւորը լաճն էլ կերթա նեճիր, ինչ կը տաննա, կը գա վար հերին, տըռնեն ձեն կիւնը, էլմէ կըսը. - Քի ուրկո՞ւք կըսը, թե՞ պուրպուք:

Ան էլ կըսը. - Օր տ'իւնը, թըղ ուրկուք իւնը:

Էն էլ կերթա, մեկ քանի'մ ասքար կառնը, կերթա սար՝ նեճիր: Օրըմ անցկում պուքըմ կիւնը, կարկուտըմ կը գա, ըրիվ-ճըրիվ կիւնը մանչ անու ասքրին, հըմեն մեկ տեղըմ վե կերթան տակ, կը մեռնին: Թագաւոր լաճը փըշուրըմ խորտ կիւնը, անու ձին աղեկ կիւնը, քանը ուր կանվաթ կա, իր ձին կը քըշը, ձին էլ հըրաւանմիշ իլիրը, անցկում կը թըռնը՝ կերթա պալկա մանլաքաթըմ, կը տանը, մեկ իրիցում տըռան հիրչիվ պայա կանը:

Ատ իրիցում էլ ախչիկըմ կա, տուս կիւնը, կը տեսնա, կերթա ուր խոր կըսը. - Կակո՞, մեկ աղեկ մարտըմ կի վար ձիուն պաղիր, թաց մի տոռ կայնիր:

Էրեց կիւնը, կը գա, կը տեսնա ան մարտու նշանքտիր ինչ կեր վերա, կը տեսնա, որ մեծ մարտու տըղա յը, խիտ կը գրուցը, անցկուն պաղիր ը՛ լեզուն չըպուլուրը, ուր խատ իրիցում գրուցը, հանա-հանա պեժըմ կա ինը, էրեցն էլ հանա կիւնը, կերթա հոդեն, ըգտպեն կը տա վանել, մարտն էլ կը առնը, կը տանը հոդեն, ձին էլ կը տանին փանկանխ, գատ կը լեցնեն հիրչիվ ձիուն:

Մարտն էլ, էրեց հոդեն կը նըստին, կը տաքնան, մարտու լեզուն կը բանցվը, էրեցն էլ կըսը. - Յե՛, մարտ, տու հուրտո՞ւք կը գատ, հո՞ւրտը տ'երթաս, տու ի՞նչ մարտ ես, մընակ ի՞նչըխ իկիր ես ըստա, ի՞նչ խըզմըթով էկիր ես:

Մարտըն էլ կըսը. - Իս չըմ գըտը՝ ինչըխ իմ իկեր, նա ձիկ խեր կա, նա մեր կա, իս էլ թու պանից սալըխ չըմ իտա, իմ ձին հանա ձի առեր, պիրիր ըստա:

Էրեցն էլ կըսը. - Դու չը՞ս իգա իմ ախչիկ տամ քի, ձի արտ, բան շատ կա, ձի էլ կա մեկ ախչիկ, արը, իմ ախչիկ տամ քիկ, խընտրաց արեք, կերեք:

Էտ էլ կըսը՝ կը գամ, կառնին:

Էրեցն էլ իր խորտ ախչիկ կը պիրը, կը փսակը վար ան մարտուն: Ատ մարտն էլ կիւնը, ուր թագաւորական խանվաքիր, նըշանքտիր կը խանը, կը տընը պուտուկըմ վե, պուտուկն էլ կը տանը փանկանխ, ձիու տակ կը փուրը, ան պուտուկ կը խուրը

հանտե, սալըմ կը տընը վար պերնին, մեկ տաստըմ ռենջըրը խալլավ կը խագնը՝ ռենջըրուօին կանը իրիցու տուն:

Տորսեն ժամանակըմ վերեն կը ընցընը, ատ թագավոր տորսեն կը տեսնա՝ լաճ գացիր սար՝ նեճիր, լաճ կուրուսիր ը, մարտ սալըխ չի տա, մեռիր ը, չըն գտնա, սաղը չըն գտնա, շատ կը խարցընին՝ սալըխ չըն առնը: Թագավորն էլ կըսկըծու՝ քանի՛մ օր էլ վերա կը ընցընը, կը մեռնը:

Դուլվաթը խավք կը թըղնին՝ մըհա վար որա գըլխուն թառը, գան անեն թագավոր, խավքն էլ կիլնը, կան կը գա, կերթա, վեց-յոթ անքար հիտիվ կարճխասա կերթա, իրիցու քաղաք, իրիցու տան վերա կը թառը, ատ անքարքիրն էլ կը խասնեն, գերեց կը բըռնեն, կը գարկեն, կըսեն. - Մի թագավորը լաճ գի ըստա՛ յը, խա՛ն տուս, մըհա ըսպաներ ես, մըհա ինչըխ իս արիր:

Ացկում կը գարկեն, կը տըլփեն, յալա յա սըթար, էրեցն էլ կըսը. - Ջա՛նըմ, իս ինչ խաբար իմ՝ ձի թագավորը լաճ ո՞րն ը, իս չըմ գըտնա:

Թագավորը լաճն էլ գացիր արտեր, աշունը չուր տըվիր, խիրկ կը մուլլախը, ուր ցանքն, արտըն էլ չուրսքուլուր ջըրիր, մեկ փըշուր մընացիր, լաճն էլ վերա կայներ, կը ջըրը, իրիցու ախչիկն էլ տըղո՞վ ը, հաննականավ խաց չըտարավ յուր իրկան, ան էլ էլավ, խաց առից, ուր իրկան խամար տարավ, մանչ արտին կը տեսնը՝ փըշու՛մ տեղ մընացեր, գի կը ջըրը, իրիկըն էլ անցկում լաճն ը, համա՛ գյուր պախն կը տընը գյետին, կը նըստը, վար ուր պախին, խացըմ էլ կը տընը վար ուր կընկան ծընկան²⁷, կուտը:

Խիտ կուտը, խիտ կը խարցընը. - Վըրե՞ հաննական խաց բիրիր ասօր:

Ան էլ կըսը. - Ապա տու ոըհաթ ես, անքար իկեր մի տուն, անցկում գարկիր իմ խոր, կը սպանը:

Էսաց. - Վըրե՞ կը գարկը, ի՞նչ կուզը:

Ախչիկն էլ էսաց. - Կըսեն՝ մի թագավորը լաճ իկեր ըստա՛, բի՛, տո՛ւ, խավք մ՛ էլ թառիր մի փարկըլխը տանիս:

Լաճն էլ համա՛ ձեռ կը տա գյետին, փանք կը տա Աստըծուն, կընկան էլ կըսը. - Կընի՛կ, իմ խերն է մեռիր, խավքն էլ թըղած եմ, իս թագավորը լաճն եմ, եկած հիտիվ ձիկ, գընա՛ տուն, ձիու տակ

²⁷ Երկաթե աթոռ, մսե սեղան (Շ.Բ.):

սալըմ կա, անտան սալ շո՛ւմ տո, պուտուկըմ կա, անտ պուտուկ ան, իմ ծիւն ան, նա քըլաւ տեղ արը, չու՛մ իս փըշու՛մ լողկանամ:

Ախչիկն կերթա տուն, խոր կըսը, փանկանխ կերթան, ծիւն տակու սալ շու՛ւմ կը տան, անտ պուտուկ կը խանեն, անու ծիւն, ան պուտուկ կանեն, կը տանին մատ լաճ, լաճն էլ կիլնը, կը լողկանա, պուտուկ կը բանա, զուր խանվաճիւր կը խանքնը, զուր ծիւն կը խեծնը, անտան դուվանթը խանվքն էլ, օր փանկանխ տանիս թառեր էր, հանտուց կը թըռնը, կը գան, անքանըն էլ խիտ, վար թանգանվորը լաճու զըլխուն կը թառը: Ասքանըն էլ անտ կընարեն կը գան, կը տեսնա ըզթանգանվորը լաճ սանանվըխ կը պըռնը, կը կայնը, թանգանվորը լաճ խընտրաց կէլնին, կը գան իրիցու տուն, տոր կը հիմանան, ուր թանգանվորը լաճ էր, հանտե իրիցուն էսաց. «Գի իմ խեր մեռիւր ը, իս տ'էլնիմ, էրթամ, էլնիմ թանգանվոր»:

Կընըկն էլ էսաց. - Ապա իս ի՞նչըխ անեմ, տու յաս, իս մընակ ի՞նչըխ անեմ:

Թանգանվորը լաճն էլ կըսը. - Ա՛րը, զքի տանեմ խիտ:

Դորսոն գանու կընիկ, հանկանխ ինչ տերթան, ծեռ կը տա, ինչ տը խիծուցը ծանտըր կիլնը, զոր կիլնը, անկանխ օր կը թըլըռ ռըքյա, տոր կը տա, անու տեռ ուռեն կը յա, թանգանվորը լաճ կըսը. «Ատիկ իջուցե՛ք, անտ ծի ոջ չըկըտորը», անտու շախ պանանկ էր, անտ տեղաց դորիս, կընիկ կը թըղնը հանտե, պագպանտըմ կը տա կընկան, կըսը. «Թե լաճ էլավ, անուն դենտ Պանանկ Շախ, հիտիվ ծիկ գան, թե ախչիկ էլավ, ծախը, գանտ պագպանտ հանտան-հանտան ծի բան ը»:

Հատոց կիլնը, կը թողնը, կերթա զուր խոր քաղաք, կիլնը թանգանվոր, կը նըստը թանթ:

Այա՛մ վերեն կը ընցնը, իրիցու ախչըկան լաճըմ կիլնը, անուն կը դենտ Պանանկ Շախ, ժանանակըմ վերեն կը ընցընը, լաճ կը ջոջանա, մանտ քաղքը ճըժիրուն կը խաղա, շատ զորպան կիլնը, ըզճըժիր զըմեն կը տըփը, անոնց մերիւրն էլ զըմենն էլ կը պանիւրանվին, կըսեն՝ շա՛ն հեթիմ, տու մի տըղենիւր զըմեն սանկըտիցիր:

Պանանկ Շախն կը գան տուն, ուր մոր կըսը. - Մարե՛, վըրե՞ ծի խեր չըկա, որ ծիկ կըսին հեթիմ, վըրե՞ տերտեր իմ խեր չը:

Մերն էլ ուր լաճուն կըսը. - Մոր տուն տերտեր քու քան-խերն ը:

Տըղեն կըսը. - Ապան իմ խերն հո՞ւր ը, իմ խեր վո՞վ ը:

Մայրը կըսը. - Քու խեր թագաւորի լաճն էր, անու խերն
մեռավ, իկին, ըզան տարան, արին թագաւոր:

Տըղեն կը խարցընը. - Ապա իմ խոր նըշան ի՞նչ կեր:

Մերն էլ իր լաճուն կըսը. - Քու խոր նըշան անտա պագ-
պանտն էր, ինչ վար քու թիվին, քու խեր էսաց՝ թի լաճ կիլնը,
կաւպը վար թիվին, թըղ գա:

Ան էլ կիլնը, պագպանտ կը կապը վար ուր թիվին, քահել
ծի՛մ կը խեծնը, լուպըմ ուսկը կը լըցը ուր ջուպ, կը յա: Շատ կը յա,
քիչ կը յա, կը խասնը ուր խոր մոտ, ուր խոր սարեն, գինը չըխա-
նը ճանչ, ձիուց պայա կիլնը:

Կըսը. - Իմ ձին տարե՛ք փարկախ, խորոտ գատ տըվեք իմ
ձիուն:

Ձին կը տանին փարկախ, խոտ, գարը, բան կը բերեն տուն,
կը գարկը ատ մարտիրուն, բան չուտը, ան էլ կըսը. - Ատ բանիր
մի՛ տեք իմ ձիուն, իմ ձին գատոնք չուտը:

Կերթան, հարդ կը բերեն, սարսանի ցուրին կը բերեն, էլըմ
կը գարկը, չուտը, ան էլ անոնց կըսը. - Ատ բանիր իմ ձին չուտը:
Ատոնքն էլ ուտը, կը տըտը:

Կըսին. - Ապա, ջանըմ, ի՞նչ տանք ուր ուտը, ձին անկուն
գատ կուտը:

Պարակ Շախ լուպըմ ուսկը կը խանը, կը գարկը ատ մար-
տիրուն:

Կըսը. - Իմ ձին նատուց կուտը:

Ատ մարտիր կերթան, թագաւորին խաբար կը տան:

Կըսեն. - Մարտըմ իկիր ը, ինչ օր տանք անու ձիուն, չի
ուտը, ըզմի կը տըվը, անու տերն էլ կըսը՝ իմ ձին ատոնք չուտը,
իմ ձին ուսկը կուտը, խիտ լուպըմ ուսկը շանք կը տա, կըսը՝ իմ
ձին նատուց կուտը:

Թագաւորն էլ կըսը. - Կանչե՛ք ատ մարտուն, թըղ գա:

Պարակ Շախ կիլնը, կիյա հանտե, թագաւորն Պարակ Շա-
խին կըսը. - Գա՛, մարտ, ձին ո՛ւսկը կուտը, ձին բընենաւե խոտ,
գարը կուտը, հայվան կա խոտ, գարը ուտը, չըտըտը:

Պարակ Շախն էլ կըսը. - Իսան էլ կա, ուր խաց կուտը, ջուր
կը խըմը, իսան կա, ուր չը տըտը:

Թագաւորն էլ կըսը. - Գըմեն իսան, հըմեն մարտ կը տըտը:

Պարակ Շախն էլ կըսը. - Ուր անկուն ը, քամի՛մ իմ մոր մոտեն գընաց, տու վըրե՞ սիցիր՝ իմ շախ պարակ ը, ծի ոջ չըկըտըը, իմ մեր չըբիրիր:

Թագավորն էլ հանձն խընտանլուց կըսը. - Դու Պարակ Շախն ի՞նչ:

Ճանչըցան, օր խեր-տըղա են, թագավորն էսաց. - Պարակ Շախ, տե ի՛լը, մա քաղքին կան արը, պըտըտը՛ մա քաղքին, կան արը, քի խանար ուրանխոթը՛ն արա:

Պարակ Շախ մա քաղքին կան իրը, քանի՛մ վախտ վերեն ընցավ, գիտըմ կընցներ քաղքը կըշտեն, խանկ կը գան, կը տեն անտ գիտ, մոր կը գեն քաղաք: Պարակ Շախ իպը, կարմունչըմ կապեց վար ան գիտուն, կայնավ կարմընչը կուշտ, վով կը գեր, վար կարմընչին վե էրթեր, կը գարկեր: Կըսեր. «Իս կարմունչ քի խանար իմ շիներ»: Խանկ կը տեն մանչ գիտուն, գիտո մեչ կը կայներ, կըսեր. «Կարմունչ կապեր եմ, ի՞նչ տու կը տաս մանչ գիտուն»:

Տորսեն գացին մա թագավոր գագընդ, գանգատ, սիցին. - Քու լաճ կարմունչըմ շիներ, կայներ վար կարմընչին, վով յա գա, կը գարնը, վար կարմընչին վե յա, կը գանը, տա գիտ, կը գանը: Վար կարմընչի վե յա կըսը՝ իս քի խանար իմ շիներ: Մա ջըրուն վե յա, կըսը՝ կարմունչ իմ շիներ, վըրե՞ մա գիտուն վե կը յաս:

Թագավորն էլ տորսեն կանչը, կը կանչը, ըզլաճ կը բիրը, սըքտըրմ կը տա, քաղքից կը թանկը, կըսը. - Տեմակ տու քաղաքըմ տը ավրես:

Դորիս Պարակ Շախ ուր ծին կը խեծնը, կերթա ուրիշ մանլաքաթըմ, սարե՛մ կը տեսնա, չուրսբուլուր սարին լըղըմ ը, կան կը գա, կը տեսնա տըղե՛մ ծի թըռուցած տանվս կերեվա: Ան էլ ուր ծին կը տանը, կը բիրը, ծին կը տաքը, կը թըռուցը ծին, ան լըղըմ կընցնը, կերթա սարը մեչ, Կարմիր տեվըմ հանդե կիլնը, էն անտա տեվը կը կըռվին, ըզտեվ կը հաղթը, կը գարկը գյետին, օր ըսպանը, տեվ հանձն կըսը. «Ձի մը՛ ըսպանը, ահդ իլնը, իս քանը ժիր իմ, քի խուլանութին անեն, ծի քուրըմ էլ կա, տամ քիկ»:

Ատու քուր կը գա, կըսը. - Ձար, ըսպանը, անիկ թե բախտը մը կա, պոմ էլ անու մըտեն տը յա:

Պարակ Շախ կըսը. - Օր ընկավ բախտ, ի՛րը ռա՛յը, իս ըգան չըմ ըսպանը ալ:

Քուրն էլ կըսը. - Օր չըս ըսպանը, անու երկու ականչ ծակը, հըմեն ականչեն ծիու նալըմ կախը, օր անու մըտեն չիլնը, օրըմ քի քընուկ տեղով ըսպանը:

Պարակ Շախ կիլնը, ականչքիր կը ծակը, նալ կը կախը անու նըշան, անու քուր կառնը: Քանի՛մ վախտ վերա կընցնը, կիլնը, ատ տեվու մըղագեք կան կը գան, հօդե՛մ կը տեսնա, կը մըտնը ատ հօդին հիմը, հօդից ինչ տ՛իլնը տաւս, հօղը սարտարը վերեն ախշըկան սուրանք ատե կը տեսնա, խելք գըլխուց կը յա:

Քիչ բան՛մ կը մընա, կիլնը, կը յա, տեվուն կըսը. - Ահա մըկա նա սուրանքը տեր բիրիր ծի խանար, յան չէ՛ մըկա ըգքի տը սպանեն:

Տեվն էլ կըսը. - Իս իրիք տարը արը թային վան անու սուրանքը տիրոջ, չըկարցա ծի խանար բերեր, գան շատ ցավցըցի, ան էլ գուր սուրանք քեշից վար թըղթին, իս էլ բիրը, տըրը ըստան, տարին տիրըմ կը յամ, ատ սուրանք թանանչա կանեն, իմ բըհեն կը խանիմ, կը տաննամ, մըկա ես ի՞նչըխ յամ, քի խանար բիրիմ:

Պարակ Շախ կըսը. - Չըմ գըտնա, յան տը բիրիս, յան ըգքի տը ըսպանեն:

Ատ տեվն էլ կիլնը, կերթա, շատ չափալամիչ կիլնը, չըկանա բան՛մ անը, կը գան, Պարակ Շախին կըսը. - Ացկուն սերպանտ արած ին, ինչըխ պըղընծի պես մըտիր հիմը, ան մարտ չըկանա բիրը, ա՛րը խա ծիկ, բանքըմ տու բիրիս:

Պարակ Շախն էլ կիլնը, կերթան ծովու պերան, տեվ կը բիրը, կըրակ կանը ատե:

Կըսը. - Անունք կը գան ըստան, ծի կը տըրփեն, կը գանկեն, ըգի անխելք կանեն, կը թըղնեն կերթան, իս կանանխիմ, կը տեսնիմ ան բան չըկա:

Ան էլ կըսը. - Ուր անցկուն ը, շա՛տ կըրակ արա, թըխ շուտ իլնին տաւս:

Կըրակ կանեն, ատ գուրլենբեն ընչ պըղընծը նման ը, անցկուն կը շուգանան, կիլնին տաւս:

Պարակ Շախ կըրակից գատըն նըստեր ը, տեվ գի ման կըրակ: Ծովու փարին, ուր խուրտան կիլնին կը գան, դեղըմ կը տան տեվու քընթին, տեվ անհանչ կընգըն հատե, անցկուն կը գանկեն, ըգտեվ նանըֆ կանեն, կը նըստեն հատե կըրակը կուշտ, ուրինց խանար քըրգանխ կը շինեն: Անոնց խըյալ ան մարտ չըկա ատեխ:

Պարանկ Շախն էլ քանկը կընարեն կանդտիկ կը գան, կը թանլը, ծովու փարին կիք կը գըրկը, կը գանվթը, կառնը գան էլ, ըզխուտանն էլ կը բիրը, ըզտեվ կը անկանխը, կառնին, կը բիրին տեվու տուն:

Ատ փարին էլ կառնը ուր խանար, խուըտանն կը տա տեվուէ, տեվուէ քուրեն՝ Պարանկ Շախը մոտեն լաճ մը կիլնը, անուն կը դընեն Տեղին Շախ:

Պարանկ Շախ օրըմ կը քընը, տեվն էլ կիլնը, կերթա կը խեծնը վար Պարանկ Շախը սըրտին, ուր խիխտը, ան կընիկ առնը ուր խանար: Ատու քուր կանկանխը, կը գան տըմըշկուլըմ կը գանկը, կը թանլը տեն, կըսը. «Ատ նանխուրուց անչըքը՝ ուր կախիր քու անկանչքիրուց, ան քի չըսպանեց, տու ահդ իս արիր, իլնիս անու խուլանն, տու ի՞նչըխ ըզան տը ըսպանես»:

Պարանկ Շախ կանկանխը, կիլնը վե, անու քուր անու քըսան կանը, ան էլ կիլնը, տեվուն կըսը. - Տե՛վ, տու էլըմ բեթանխտ ընգան տուս, խա՞:

Տեվ էլըմ թորան կանը:

Էտա փարին կիլնը տըղով, ախչիկըմ կը բիրը, կը մընա, քաննի՛մ ժանանակ վերա կընցնը, օրըմ ախչըկան անուն կը դընեն Փարիկ:

Էտա տեվն էլ կը բիրը, ան ախչիկ բալուլ կանը, կը տանը, թանլը ծով: Չաչանց խանլկ կը տանեն Չաչանց թագանվորը խանար կը պախեն: Պարանկ Շախն էլ կիլնը, տեվ կը սպանը:

Տեղին Շախ կը ջոջանա, կիլնը, կերթա նեծիր, կերթա ուրիշ կագեն կիլնը տուս, էվարին կերթա Վառիկ Վարդանը քաղքը մեջ, տուր կերթա, անու տեղ չըն իտա, ան էլ կը գանկը խանլկ կը սպանը, կը ջարթը, կանջագը:

Վառիկ Վարդան կըտրիճ մարտըմ կիլնը, անու սարեն էլ գի քիչե՛մ, անու կըսեն. - Մենք քու լանյեղ չենք, գընա՛, Վառիկ Վարդանը քու լանյեղ, մենք չիվար ենք, տու վար մի կանաս, գընա՛, ան քու հաղկ կը գան տուս:

Տեղին Շախ կըսը. - Վա՛ն, մըկա ան անցկում գորպան յը՞:

Կիլնը կանտ կանը, անու սարեն կը յա, Վառիկ Վարդան էվարին նեծիրից կը գան, հիսուն թանլիթ նեծիր խիտ կիլնը:

Կըսը. - Ո՛ւյ, յանե վար ծի մարտ գան տալ, իս ժիր՝ մարտ գան վար իմ տան:

Էտտեղ Վառիկ Վարդան կառնեն իրարու, կը կըռվեն, Տեղին Շախ կը զանը ըզՎառիկ Վարդան կը սպանը, կերթա Վառիկ Վարդանը սարեն, անու ախչիկ կառնը, կը նըստը: Վառիկ Վարդանի ախչըկան վերեն ժամանակըմ կընցնը, անու լաճըմ կիլնը, անուն կը դընեն Շիրին Շախ:

Շիրին Շախ ինչ կը ջոջանա, ֆեհմա կիլնը, ան Փարիկ, Շիրին Շախ մա էրագին ըզմեմեկ կը տեսնան, կը սիրվին վար մեմեկու: Շիրին Շախ խորոտ կը ջոջանա, հասակին կը խասնը, կիլնը, ըզծին կը խեծնը, թուր կը կապը վար ուր, կերթա կագիմ, կելնի տուս, կը տեսնա հատե Սըվտակ տեվ, Սեվ տեվ կը կըռվին: Ատե Սեվ տեվ ընչ տարբ տը զանը, Սըվտակ տեվ կը բարանկնա, կիլնը ինչըխ ասեխ: Սըվտակ տեվ ինչ տարբ կը զանը Սեվ տեվուն, Սեվ տեվ կը խաստանա, կը լըցվը, կը ջոջանա, կուռը:

Դորսեն կըսը. - Ի՞նչըխ անեմ, էրթամ Սեվ տեվու կընար, ան չըխոմ կըտրիճ ը:

Ան էլ կերթա Սըվտակ տեվու կընար, Սըվտակ տեվ կըսը. - Աստըծո սիրուն, քի տու կընարըմ, չիլնը ան քաֆրը տարբ տեպնա քի, ախըր հա իս ընկիր իմ անու ձեռ, ձի տը ըսպանը, ըզքի էլ չըսպանը:

Շիրին Շախն էլ էսաց. - Թուր ես էրթամ Սեվ տեվու կըռիվ՝ ըզՍեվ տեվ ըսպանեմ:

Սըվտակ տեվը կըսը. - Ձանիլու տարբ անուրն ը, իս զի կը տամ հիրչիվ, չուր ան ուր տարբ կը զանը:

Սեվ տեվ ուր տարբ կը զանը, կը պըրծնը, տորսեն Շիրին Շախ ուր ձին կը խեծնը, կը քըշը վար Սեվ տեվուն, թուրըմ կը զարկը, Սեվ տեվու գըլոխ կը թըռուցը, պոռուցըմ մոտեն կիլնը, գըլոխ կիլնը խատ էրկնուց:

Շիրին Շախ կը տատըր վար ջանդակին, ջանդակը կը փըրտը, Սըվտակ տեվ ձեռ կը տա ըզՇիրին Շախ, կը պըռնը, կը թալը արտաջափըմ կը զատնացըցը:

Սեվ տեվու գըլոխ էրկնուց կը գա տակ, կը տեպնա վար ջանդակին, ջանդակ կը տանը հանդուրթ:

Շիրին Շախ կըսը. - Բեբախտ Սըվտակ տեվ, տու վըրե՞ չըթողիր իս ըզՍեվ տեվ փըրտեր:

Սըվտակ տեվը կըսը. - Շիրին Շախ, խուհոհտ, արեվոտ մեռնիմ, իս ան անպով ըզքի թըլցը տեն, անու գըլոխ քի չըտաներ

հանդուրժ, որ իս ըզքի չըթալեր տեն, ան սերպանտ էր: Տեսա՞ր տեսպավ վար ուր ջանդանկին, էլըմ տարավ հանդուրժ:

Սըվտակ, Տեղին Շախ էլան, իկին Սըվտակ տեվուչ տունը, Սըվտակ տեվուն էրկու խորոտ ախչիկ կեր, հիրիկուն քընիլու գախ հորողկից Տեղին Շախը, որ իցկեր մեկ ան կուշտ, մեկ ան կուշտ պառկելու գախ: Տեղին Շախն էլ մընչ թախ ան ախչիկ իրիշկից, մընչ թախ ան ախչիկ իրիշկից, չուր խըլխուն ախպոր պես էլան վե:

Տեղին Շախն էլ ահդ արիր ը՝ չուր Փարիկ չառնը, թուհ մարտու մոտ չերթա:

Սըվտակ տեվ էսաց. - Տեղին Շախ, քու մըրագ ի՞նչ կը, ո՛ւզը, տու գիմ խուզին ազատեր ես, ինչ իմ մոտեն գա, իս քի թախսիր չըմ անը, ծի էրկու ախչիկ կա, էրկուսն էլ կը տամ քիկ:

Տեղին Շախ էսաց. - Քու ախչիկքիր իմ մեր, իմ քուրն ին, լա իմ կընիկ Չաչանքտիր տարած ին՝ Փարիկն ը: Գի Չաչանց երկիր, իս տ՛երթամ, չըմ գնա, որ տեղ վե էրթամ:

Սըվտակ տեվ անու կըսը. - Կը յաս ծովու պերան, կը մընաս հանտեխ չուր էվարին, էվարին մութ կը տա, Փարիկ կը գա մա քիկ, մըհա ինչ շիրաթ տ՛անը:

Ան էլ կերթա հանտե, գիշիր կը մընա չուր հանազան ժա-մանակ, Փարիկ ախչիկը չըկանա գա, մարտ կը հորողկը, կըսը. - Շիրին Շախին սիցե՛ք, որ կանա թըխ շոտ գա, ծիկ տանը, վաղ չէ մեկէլ որ ծի տը տանին:

Շիրին Շախ կը գա, Սըվտակ տեվուն կըսը. - Իս ի՞նչըխ անեմ, չըմ կանա վար ծովուն էրթա:

Սըվտակ տեվ ուր ախչկըտիրուն կըսը. - Ախչի՛, էլե՛ք Շիրին Շախի ձեռը, ոտքիր տեղեցե՛ք, որ կանա վար ծովուն ընցընը:

Սըվտակ տեվու ախչկըտիր անու ձեռը, ոտքիր կը տեղին, լա մեկ փշու՛մ տեղ կը թըղեն, կըսեն. - Ապա վըրե՞ ան գիշիր մը՛նչ մի մոտեն պազըմ առեց, մը՛նչ... որ անցկուն ը, նա մեկ ոտ թըղ մընա կիսատեղիլ, ուր չարչարվը:

Շիրին Շախ կիլնը, կը յա Չաչանց երկիր, ան մեկ ոտ չը-խուրվը, լա ան մեկէլ ոտ համա կը խուրվը, ատարգ չարչարվելով կերթա, ըզծով կը խըլըսցուցը: Սըվտակ տեվն էլ մազըմ տըվիր ըզՇիրին Շախ, սիրը. «Ուր նեղ տեղ ընկնիս, մազ տաս կըրակ, իս քի կը խասնեմ, մեկն էլ ծով կը խըլըսցիս, կերթաք Չաչանց երկիր,

խեղեղ կիւնը, ըզմարտիր զըմեն կը տանը, տու կիւնիս ծառ վե,
չուր խեղեղ կիւնը, կը պըրծնը, կիւնը արեվ, խեղեղը տավըր խիտ
կերթաս ծովու պըռուկ, հանտուց ծովու քավու պես բա՛մ կառնես
խա՛ քի, կերթաս, կերթաս թագավորը քաղաք, ըզքի կանիս հեքըմ,
թագավորը լաճ պրինտար ը, ըզքի կը տանին ան պրինտարը
վերա, անտ ծովու քավ կը տաս վերա, կը լվաս, էլմէլ կը ցըրցնիս
վերա, կը սաղանա: Ան էլ քի կըսը՝ քու ուզիլուն ո՛ւզը: Տու էլ կը-
սես՝ իմ տեղ զանտն ը, ծի քու ծին կըպը խեծնիմ էրթամ»:

Ան էլ կիւնը, կերթա անու սածը պես հըմեն կանը, ըզթա-
գավորը լաճու ծին կուզը, կըսը. - Դա՛յ, քու սովորըցըցողը պերան
կուտըրը, հայտե՛, իս ահդ իմ արիր, ա՛ռ:

Զին կը տա Շիրին Շախին:

Դորսեն կիւնը, ըզՓարիկ ծին կը քըշը: Դիրիկուն ընչ խա՛լկ
կը քընեն, կառնը ըզՓարիկ, կը խեծնը ըզծին, ծին կը քըշը: Ատ
ծին վար ծովուն փըշուր չըր խուրվը: Ինչ վար ծովուն վե կերթա
սար-ձոր կը կանչեն՝ հա՛յ, թագավորը խարս տարան, Փարիկ
տարան:

Զորս կըմարեն Չաչանց ախշկըտիր իկին, անու չուրսբու-
լիւր բըռնեցին, իրիք օր, իրիք գիշիր Փարիկ, Շիրին Շախ խանտ
անքարքիրուն կըռիվ կանը: Քանը կը սպանը, Չաչանքտիր էլմէլ
կը հավելնան: Իրիք օր, իրիք գիշիր, օր կը մընա, քիչ մընաց, օր
ծովուց իլնը տուս, հատեն նեղ կընգնը, ձեռքեր կը թուլնան, կա-
վաթե կընգնը՝ Սըվտակ տեվու մագ կը տա կըռակ, Սըվտակ տեվ
կը կանչը, կըսը. - Խուհզուտ, արեվուտ մեռնիմ, դու նեղն ես ըն-
կեր, ի՞նչ կուզես, օր անեն:
Շիրին Շախն էլ կը կանչը.

Կուզիմ բիրթիկըմ քարեղեն,
Պողվըտե բատանը բուլիւր,
Թըլիմ իմ Փարիկը մեջ,
Դանճամ իմ կըռվու վերեն:

Սըվտակ տեվ կը կանչը.

Իս կիւնիմ բիրթիկըմ քարեղեն,
Պողվըտե բատանը բուլիւր,
Էրկըթե տարգըխքիր վերեն,
Դու թա՛լ քուր ախպոր վերեն,
Դանճըր քու կըռվու վերեն:

Շիրին Շախ կըսը.

Կուզեմ բիրթիկըմ քարեղեն,
Պողվըտե բատանը բուլիւր,
Էրկըթե տարգըխքիր վերեն,
Թըլիմ իմ Փարիկ մեջ,
Դաննամ գիմ կըռվու վերեն:

Սըվտակ տեվն կըսը.

Իս կիլնիմ բիրթիկըմ քարեղեց²⁸.

Չորսին տեվ կըսը.

Թա՛լ ախչիկ հոր վերեն, էմէլ չանը:

Կըտին տիր կըսը.

Թա՛լ սանաններ քավրոչ վերեն,
Դա՛ռցը քու կըռվու վերեն:

Տեվ կիլնը բիրթ, Շիրին Շախ ըզկընիկ կը թալը տեվուչ վերեն, տեվ կիլնը բիրթըմ, կը գա՛ հիրար, կընիկ կը մընա մեջ, ինք կը դաննա վար չուր կըռվուն, քանը կը սպանը, տըհա՛ կը շա՛տաննան:

Յոթ օր կը կըռվին, ըզասքար կը հաղթը, կիլնը տաւս:

Սըվտակ տեվ կը քակվը, կըսը. - Սանաններ թալիր իս քավրոչ վերեն, ա՛ռ իմ ախպեր:

Շիրին Շախ կիլնը, կառնը ուր կընիկ, կը դաննա տուն, յոթ օր, յոթ գիշիր խարսնիս կանը, կը պսակվը:

Էն կը խասնը ուր մըրագին, դաւք էլ խասնիք ձի մըրագին:



²⁸ Կրկնում է երեք անգամ իր ասածը, երեք անգամ կրկնում է և Շիրին Շախը (Ծ.Բ):